ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուների ցուցակը հաստատելու և փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպությանը ընտրելու վերաբերյալ

05.08.2015թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանի,

«Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Արտակ Զեյնալյանի,

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի տնօրեն Արման Դանիելյանի,

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի գործադիր տնօրեն Նաիրա Առաքելյանի,

«Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Բաբկեն Պիպոյանի,

«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Միքայել Արամյանի,

«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Հռիփսիմե Կիրակոսյանի,

«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի նախագահ Վարուժան Սեդրակյանի

Հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի՝ «Հասարակական կազմակերպությունների կողմից թեկնածություններ առաջարկելու կարգը սահմանելու մասին» թիվ 736-ն որոշումը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության՝ հասարակական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածություններ ներկայացնելու գործընթաց սկսելու մասին հայտարարությունով, հիմնվելով թեկնածուների գրավոր համաձայնությունների վրա՝

1. հաստատեցին անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուների ցուցակը,
2. իրենց կազմից ընտրեցին փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպությանը:

1. Հասարակական կազմակերպությունների նախագահները քննարկեցին անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածությունները, փոխանակվեցին կարծիքներով,

առաջարկություններով և միաձայն հաստատեցին անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի թեկնածուների ցուցակը՝ ցուցակում ընդգրկելով մեկ թեկնածու՝

• «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանին:

2. Հասարակական կազմակերպություններն իրենց կազմից փաստաթղթերը ներկայացնող հասարակական կազմակերպություն ընտրեցին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյան

«Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան
ՀԿ-ի նախագահ Արտակ Զեյնալյան

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»
ՀԿ-ի տնօրեն Արման Դանիելյան

«Արմավիրի զարգացման կենտրոն»
ՀԿ-ի գործադիր տնօրեն Նաիրա Առաքելյան

«Իրազեկ և պաշտպանված սպառող»
ՀԿ-ի նախագահ Բաբկեն Պիպոյան

«Ընդդեմ իրավական կամայականության»
ՀԿ-ի նախագահ Միքայել Արամյան,

«Առաքելություն Հայաստան» բարեգործական
ՀԿ-ի նախագահ Հռիփսիմե Կիրակոսյան

«Հայաստանի մանուկների ասոցիացիա» բարեգործական
ՀԿ-ի նախագահ Վարուժան Մեղրակյան